# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 փետրվարի 2025 թվականի թիվ 100-Ա

## «ՆՆ ՀՈԼԴԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2025 թվականի փետրվարի 18-ի նիստում, քննարկելով «ՆՆ Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **«ՆՆ Հոլդինգ» ընկերություն**) կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին հարցը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովի մրցակցության վերահսկողության վարչության (այսուհետ նաև՝ **Պատասխանատու ստորաբաժանում**) կողմից 2025 թվականի փետրվարի 14-ին Հանձնաժողովի նախագահին է ներկայացվել թիվ ՄՊՀ-001769 զեկուցագիրը (այսուհետ նաև՝ **Զեկուցագիր**), որում նշվել է, որ Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի փետրվարի 12-ի թիվ 40-Ա հիման վրա Պատասխանատու ստորաբաժանման կողմից 2025 թվականի փետրվարի 12-ին «ՆՆ Հոլդինգ» ընկերությանը պատկանող՝ ք. Երևան, Մաշտոց 42/4 հասցեում գործող «88» առևտրի օբյեկտում (այսուհետ նաև՝ **Առևտրի օբյեկտ 1**) և Վարդանանց 14/4 հասցեում գործող «88» առևտրի օբյեկտում (այսուհետ նաև՝ **Առևտրի օբյեկտ 2**) իրականացվել են դիտանցումներ, կազմվել են «Դիտանցման արդյունքների վերաբերյալ» համապատասխանաբար թիվ 40/1 և թիվ 40/2 արձանագրությունները (այսուհետ նաև՝ **թիվ 40/1 և 40/2 արձանագրություն**):

Թիվ 40/1 և թիվ 40/2 արձանագրությունների համաձայն՝ «ՆՆ Հոլդինգ» ընկերությանը պատկանող «88» առևտրային ցանցում (այսուհետ նաև՝ **Առևտրային ցանց**) վաճառվում են միայն իր հետ փոխկապակցված «Շիրակ ԹՖ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ «Շիրակ ԹՖ» ընկերություն) կողմից արտադրվող հատով և տուփով հավկիթներ: Ընդ որում, Առևտրային ցանցում «Շիրակ ԹՖ» ընկերության կողմից արտադրվող հավկիթները ներկայացված են հետևյալ գներով.

1) հավկիթ Շիրակ N01 հատ – 29 դրամ,
2) հավկիթ Շիրակ N02 հատ – 34 դրամ,
3) հավկիթ Շիրակ N03 հատ – 41 դրամ,
4) հավկիթ Շիրակ 6 հատ – 230 դրամ,
5) հավկիթ Շիրակ 15 հատ – 580 դրամ:

Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրում է, որ «ՆՆ Հոլդինգ» ընկերության ընդհանուր կառավարման և «ՆՆ Հոլդինգ» ընկերությանը պատկանող միևնույն ապրանքային նշանի («ՍՈՒՊԵՐՄԱՐԿԵՏ ԷՅԹԻ ԷՅԹ») ներքո են գործում չորս և ավելի առևտրային օբյեկտներ (առևտրային ցանց), որոնցում իրացման տարեկան հասույթը գերազանցում է ընդհանուր երեք միլիարդ դրամը:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.8 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արգելվում են առևտրային ցանցի կողմից խտրական պայմանների սահմանումը և կիրառումը մատակարարների հետ հարաբերությունների հաստատման, ընթացիկ ու դադարեցման գործընթացում, բացառությամբ եթե Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի պատճառաբանված որոշմամբ առկա է ողջամիտ և օբյեկտիվ տարբերության հիմք՝ պայմանավորված նաև տնտեսական պայմաններով (գործոններով) կամ առանձին խմբի կարգավիճակով:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.9 հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Առևտրային ցանցն ունի պաշտոնական կայք:

2. Առևտրային ցանցը պաշտոնական կայքում հրապարակում է՝

1) հավանական մատակարարի ապրանքի ընտրության նվազագույն պահանջները և սկզբունքները.

2) առևտրային ցանցի կողմից իրացման ենթակա ապրանքատեսակների ցանկը.

3) առևտրային ցանցում ապրանքի ցուցադրման պայմանները.

4) մատակարարման հարաբերությունների դադարեցման հիմքերը:

Ստացվում է՝ «ՆՆ Հոլդինգ» ընկերությունը իրեն պատկանող «88» առևտրային ցանցում ցուցադրում է միայն ընկերության հետ փոխկապակցվածություն ունեցող «Շիրակ ԹՖ» ընկերության հավկիթներ:

Ընդ որում, Առևտրային ցանցը չունի «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված համապատասխան կայք, որտեղ պետք է ներկայացվեն հավանական մատակարարի ապրանքի ընտրության նվազագույն պահանջները և սկզբունքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պատասխանատու ստորաբաժանումը առաջարկել է ՆՆ Հոլդինգ» ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցել:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. տնտեսավարող սուբյեկտն ունի բանակցային ուժեղ դիրք, եթե՝

1) համապատասխան ոլորտում իր էական ազդեցության կամ ենթակառուցվածքի շնորհիվ կարող է ապահովել համապատասխան ապրանքների մուտքն իրացման շուկա, և նրա հետ պայմանագիր կնքած կամ կնքել ցանկացող տնտեսավարող սուբյեկտը չունի հնարավորություն առանց տվյալ տնտեսավարող սուբյեկտի հետ համագործակցության սպառողներին իրացնելու այդ ապրանքները, կամ բացակայում է այլընտրանքի տնտեսական նպատակահարմարությունը, կամ

2) տվյալ տնտեսավարող սուբյեկտի ընդհանուր կառավարման ներքո են չորս կամ ավելի առևտրային օբյեկտներ (առևտրային ցանց), որոնցում իրացման տարեկան հասույթը գերազանցում է ընդհանուր երեք միլիարդ դրամը, կամ

3) տվյալ տնտեսավարող սուբյեկտին պատկանող կամ նրա կողմից օգտագործվող միևնույն ապրանքային նշանի կամ անհատականացման այլ միջոցի ներքո գործում են չորս կամ ավելի առևտրային օբյեկտներ (առևտրային ցանց), որոնցում իրացման տարեկան հասույթը գերազանցում է ընդհանուր երեք միլիարդ դրամը:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված բանակցային ուժեղ դիրքի առկայությունը որոշվում է՝ հաշվի առնելով՝

1) իրացնողների և ձեռք բերողների միջև տնտեսական կամ այլ հարաբերությունների բնույթը կամ պատմությունը, կամ

2) ոլորտի կամ իրացվող ապրանքի առանձնահատկությունները, կամ

3) այդ տնտեսավարող սուբյեկտների գործարար գործունեության շրջանակը, կամ

4) այդ տնտեսավարող սուբյեկտների հասույթի չափը, կամ

5) իրացնող և ձեռք բերող տնտեսավարող սուբյեկտների՝ միմյանցից կախվածության աստիճանը, կամ

6) այլընտրանքային առևտրային գործընկեր կամ իրացման այլ աղբյուրներ կամ ենթակառուցվածքներ գտնելու հնարավորությունը և տնտեսական նպատակահարմարությունը:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝

1. Արգելվում է տնտեսավարող սուբյեկտների կողմից բանակցային ուժեղ դիրքի չարաշահումը:

2. Բանակցային ուժեղ դիրքի չարաշահում է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հիմնավորված չէ տնտեսական պայմաններով կամ գործոններով և վնասում է կամ կարող է վնասել բանակցություններում թույլ դիրք ունեցող կողմի շահերը:

3. Բանակցային ուժեղ դիրքի չարաշահում է համարվում՝

1) ապրանքներ ձեռք բերելուց անհիմն հրաժարվելը.

2) խտրական պայմանների սահմանումը կամ կիրառումը. (...)

7) բանակցային ուժեղ դիրք ունեցող սուբյեկտին պատկանող առևտրային ցանցերում մրցակից ապրանքների գների, ցուցադրման եղանակի, տեղի և իրացման համար էական նշանակություն ունեցող այլ պայմանների միջև արհեստական տարբերությունների սահմանումը կամ կիրառումը. (...)

13) «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 4.4-րդ գլխով նախատեսված առևտրային ցանցերի և մատակարարների միջև արդար առևտրի կանոնների խախտում թույլ տալը, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել տնտեսական մրցակցության կանխման, սահմանափակման, արգելման կամ անբարեխիղճ մրցակցության, ինչպես նաև կարող է վնասել սպառողների շահերը.

14) այլ գործողություն կամ վարքագիծ, որը պարունակում է սույն հոդվածի 2-րդ մասի հատկանիշները:

Վերոնշյալից հետևում է, որ օրենսդիրը բանակցային ուժեղ դիրքի չարաշահման դրսևորումների սպառիչ ցանկ չի սահմանել, այլ մասնավորեցրել է դրանցից մի քանիսը, ընդ որում միևնույն վարքագիծը կարող է համապատասխանել բանակցային ուժեղ դիրքի չարաշահման մի քանի դրսևորումների:

Տվյալ դեպքում «ՆՆ Հոլդինգ» ընկերության կողմից համապատասխան կայքով հավանական մատակարարի ապրանքի ընտրության նվազագույն պահանջները և սկզբունքները չսահմանելու պայմաններում միայն իր հետ փոխկապակցված «Շիրակ ԹՖ» ընկերության հավկիթները շուկայական գների համեմատ ցածր գնով իրացնելու առնչությամբ դրսևորած վարքագիծն ու գործողությունները առերևույթ պարունակում են բանակցային ուժեղ դիրքի չարաշահման հատկանիշներ:

Օրենքի 92-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բանակցային ուժեղ դիրքի չարաշահման համար նշանակվող տուգանքի չափը կազմում է իրավախախտում թույլ տված տնտեսավարող սուբյեկտի՝ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև 10 տոկոսը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում «ՆՆ Հոլդինգ» ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման հատկանիշները պարզելու նպատակով հարուցել վարույթ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 79-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 83-րդ հոդվածի 1-ին մասով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

## ՈՐՈՇԵՑ

1. «ՆՆ Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ հարուցել վարույթ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՆԱԽԱԳԱՀ** **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2025 թ. փետրվարի 19
Երևան